



ՍՈՆԱ ԱՆՏՈՆՅԱՆ

Այսօր և հիմա ահագնացող տագնապն է ուղեկցում մեզ, անորոշությունը, որի կրողները մահկանացուներն են...

Շատ ենք կորցրել՝ տուն, զավակներ... Սեղմվում ու սեղմվում ենք, թեև թանկ նվիրումներ ունենք:

Այսօր և հիմա ես խոսում եմ նվիրումներից. նվիրումներ, որոնք անուններ ունեն և կերպավորված են, նվիրումներ, որ խոսացած են, բյուրեղացած այնպես, ինչպես մայրը, զինվորը, ուսուցիչը, բժիշկը... Նրանք շատ են ու անկրկնելի, նրանք բացառիկ են, ինչպես անփոխարինելի է սահմանին ու մարտի դաշտում չհանձնվող զինվորը, ինչպես մայրական օրհնամբը, և՛ ջանքը ուսուցչի, որի խստությունը հոր քնքշանքից առավել է, և՛ բժիշկը, որի կենսաբան ուժի ենք հավանում շատերս:

Մայր, հայր, զինվոր, բժիշկ, ուսուցիչ՝ նվիրումներ են, կոչումներ: Անվերջ հիացումներս նրանց, իսկ ներքոյս այս անգամ բժիշկներին է հղված. նրանք

անուններ չեն և կյանքի առաջնագծում են միշտ թե՛ իբրև բժիշկ, թե՛ զինվոր:

Չե՞՞ Եվ ամեն օր ծնվում էի նորից, և ամեն օր վերջալույսն էր ավետիս, և ձեռքերս էին ուժեղ և արցունքս՝ չընկնող, հույսը՝ մերան, և սերը՝ պինդ, և սերը՝ ջինջ,

Ես այդ փրկվածն եմ միշտ:

ՀԻԱՑՈՒՄՆԵՐ

Օ՞, շռայլ, դու կիջնես անսքող վերևից ու դարձյալ ամպերի ծարավը կտեղաս քարերին, սրտերին, ուսերին՝ մերկ ու բարկ:

Հրայր ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ

1 Ողջույն, օր, որ աստղակերպ եկար և ինձ լցրիր լույսով. ցուլք-ցուլք իջնես հասկին, տիեզերքին ծոպք լինես:

Մի ակնթաթ և լուռ հավերժող օր, ինձ վրա շամանդաղ չդողացիր անփույթ, երբ հավաքեցիր բույրեր մեկ-մեկ և շատ, ո՞ւմ սիրույն փաղաքշեցիր, ո՞ւմ աչքերից քմայքով չիջար ծառիս ճյուղին հիացմունքով, ձիգ ու անհագուրդ սեղմվեցիր ինձ, և ծիրեցին ավերդ անծիր. սրտիս տիեզե՞րք դիպավ, ես տրվեցի նիրհող բողբոջներով և շաղվեցի բացվող լույսին

Ուրբ թրթռուն սրտխփոցով: Լ՛ մոխրագներ, և՛ մոխրագներ արագասիրտ սուրացին քեզ:

Օր՝ հավերժող իմ ակնթաթ, տագնապներս անցան աշնան մտքում, ի՞նչ ծփանքով եկար, ի՞նչ թռչնային այսօր բողբոջներիս անզուսպ շուքով, թացված խինդով, և՛ հրայրքով, և՛ հրայրքով:

2 Երբ գան քամիներն անվարան, և ծառս սլացիկ չուզեմս ծնկել, երբ ծիւս չծալվի, երբ ճյուղն իմ քամու սարսուռը հագնի դեռ դալար,

դու կիջնես անսքող վերևից և դարձյալ ամպերի ծարավը կտեղաս քարերին, սրտերին, ուսերին՝ մերկ ու բարկ:

Շիթերդ, օ՞, շռայլ, շիթերդ ցավն ինձնից բառ դարձած կպոկեն, իմ լցված կարոտի աչքերում ժպիտը անանուն կդողա, օ՞, շռայլ, դու կգաս շշուկով մարմնի, խնձորի խռովքով անշշուկ կդիպես ժայռերի ուսերին, և կհոսես արևի ցորենից սրտերի զուտ ոսկի ծփանքով շիվերդ փխրունի, շիվերդ անվարան ընդերքից կարթնանան քո ծեփի զուլալով, քո հույսի կեսօրին ճամփորդ չի մոլորվի. իմ ճերմակ,

իմ կանաչ եզերքում կանչողին կհասնես, տագնապը՝ վիհերի չիմացած, դու դարձյալ քո ներսում կամոքես, կգոցվես արտույտի հրճվանքով նոր օրվա:

Դու կգաս մերկ ու բարկ, օ՞, շռայլ կբացվես, կճողփաս, կթևես...

ԶԳԱԼ Գագիկ ԴԵՐՈՅԱՆԻՆ

Զգալ, որ լուսաբացն անկրկնելի է, եթե անգամ պատուհանիդ արևը դեռ չի հավել,

լինել ջղերով, մազանոթներով, զգալ, եթե արմուկդ լույսը չի գրկել, զալ լույսի գրկախառնումով, մաշկիդ թրթռոցը սեղմելով՝ էլի զալ խոնավ ավերով, խռիվ ու սահուն գալ, զալ, զալ...

անթովչանք, անմրմունջ,

զգալ, որ միշտ էլ անվերջ եմ սիրում, որ ինձ, քեզ զգայուն դարձնողների ջանքն է սխրանքը, զարմանալ, որ դեռ չունես բառեր, դեռ բառեր չկան, և օդը չի հերիքում. հիացմունք է միայն...

Թևերս բաց են, և ես ծնվեցի...

ԱՐԵՎԱԳԻՐ Արևային միանգամից մի հնչումով նետարձակ տող:

Մաքրաբույր է արթնակոչը, նրբանկար ու կաթնաբույր, ու կայլակող. յուրային ես՝ ակնածալի ներբողումով...

ՀՐԱՏԱՊ

Վերցնեմ սկիհը կենսահույսի և անուններ բաշխեմ օրվան. դեկանվի մոտ՝ լուսատուին մեր տվճյան, իսկ ծիրերի լազուրներում արբանիկ թռչունների՞ն արբանիկ մեջ ելած գարնան, կբարձրանա՞, կսաստկանա՞ զուլալ կանաչ գագոններից ոսկեծաղիկ...

Նոր օր կգա. սքանչացե՛ք:

ԱՌԱՅՑ ԴԵՂԱՅԱՐԻ Մի խոտություն, մի բացթողում, մի ընդվզում, ներկայություն, մի հիացում... մի...

Հորինում ենք դառն ու կծու, օրեր՝ քաղցր ու թթվաշ և անհետ, և ի՞նչ երազ՝ առանց կախարդանքի, մեն մի Աստված՝ թեքված ցավին, մեն մի Աստված՝ բժիշկ՝ մի մաքառող երան...

Ո՞ր ես ալպիական բյուրածաղիկ եզերք:



ՎՈՎԱ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Ծնունդով Արցախից է: Ավարտել է ճարտարի Արվեստի դպրոցի դաշնամուրի բաժինը: Այժմ սովորում է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ «Սցենարադրամատուրգիական արվեստ» բաժնում: Հեղինակ է չորս գրքի: Արցախի և Հայաստանի գրողների միությունների անդամ է: «Գրական Արցախ» պարբերականի և «Վարդանանք» թերթի գլխավոր խմբագիրն է, «Ղիշա» հրատարակչության տնօրենն ու խմբագիրը: Թղթակցում է տարանուն պարբերականների ու ամսագրերի:

Քալիի ինձ հետ դեպի աշնան արահետը սոված, որ մեռնում է հիմա, ինչպես օդը զինվորի մոր աչքերում ու անձնագիր պահան-

ջում որդուն տեսնելու համար: Այս անձրևը հետքն է փոթորիկի, որ լինում է հանդիպումներից առաջ ու կտակ գրելիս: Մեկը չի հասցնում գրել... կամ չեն թողնում: Եվ հաղթանակը գույներ չէ պարզապես, որ մարդկանց ձեռքերում է: Այն երկնքում է՝ կիսատ, մենք երկրում ենք՝ կիսատ...

Իմ փոքրիկ տան ճաքած պատերի արանքում քո պատկերն է նորանում, ամեն օր առանց հարցնելու հնամալով, և սերդ ծածկում է պատուհանը, որտեղ մի անգամ ինքնասպան են եղել կարոտներս, որոնց այդպես էլ չհանդիպեցի:

Հասկացել եմ, որ դու մի տառ ես, որ կյանքումս չեմ կարող բառ կազմել ու սկսում եմ երգել բոլոր թռչունների փոխարեն, որ լինես, միշտ լինես

այստեղ, շատ մոտ, համատարած այս աշխարհում, ազատ, ինչպես տողերս են քո մասին:

Քաղաքը արթուն է մինչև առավոտ ու քնելու մասին չի խոսում:

Ես տաք վառարան եմ դառնում ու նստում ոչ թե փողոցի նստարանին, այլ կողքի:

Լուսացույցի հետ մտորում եմ թաքուն, որ չտուգանեն հանկարծ կարմիր լույսին համակրելուս համար:

...և աղմկում է մեկը. մայթերն են: Նրանք ամպրոպ են երգում ու նրանց երազանքը կատարվում է: Անձրև է:

Իսկ իմ կարոտները երբեք հետ չեն գալիս ու անկատար են մանկության տնիցս մինչև աղոթատուն և երկրից մինչև երկինք:

Երկնային ճախրը ավարտվում է աչքերիդ մեջ,

ու կամաց հանում եմ կոշիկներս երկիր մտնելու համար: Կներես, կարմիր թելերը կտրում են երկիրը ու անձրևները սովորականի պես չեն գալիս:

Անձրևը հեքիաթ է անիմաստ, որ գալիս է քեզ տանելու տաք երկրներ, որտեղ այդպես էլ չես հանգստանալու:

Երկիրը կապել են կարմիր թելերով ու կիսում են տառապանքները արձաններ դարձած:


Մեր փողոցն է ներսուդուրսս ճանաչում ավելի, միշտ մի քիչ ավել, ու նստարանը, որին քսվում է մեր սիրահոտ մարմինը կլանված: Չխաբեմք իրար Սիրելու համար...

Աշխարհը մտերմաբար հիշողության երկար պարանն է ձգում քամու երկարությամբ ու մեր խորությամբ:

Մոռացել էի, որ աշունը երես է առնում խոսքերից ու անտաղանդ համարում բոլորին:

Սպասումները տրամադրություն ունեն կիսված երկրի հատվածներում, ու երբ ճոճանակը պոկվում է երկնքից հիշողությունը գայթակղում է ներսը ստվերված:

Վերիվարումները ծնվում են մեր գրույցից պատահական, որ անավարտ են թողնում հայացքները անշունչ ժամանակի, որ մոռանում է ծաղկել զինետան բակում անշուք, որտեղ թաղել են ստվերներ՝ ինձ հետևող ու քո պարանոցը գրկած:



Նոր գրքեր


Պատրաստեց Ն.Նիկողոսյանը



«Ձանգակ» հրատարակչությունը լույս է ընծայել Արցախյան 44-օրյա պատերազմում անմահացած Ալեքսան Սիմոնյանի մի խորագրով գիրքը, որը մասունք առ մասունք հավաքել ու կազմել է հերոսի մայրը՝ Գոհար Սիմոնյանը:

Ուշագրավ է, որ գրքում տեղ են գտել Ալեքին միջուկային հուշեր, կենսական պատմություն, հարազատների ու ընկերների անմիջական պատմություններից դրվագներ, որոնցում բացահայտվում է ազնիվ հայորդու՝ հայրենիքին իմացյալ սիրով միջուկային մարդու կերպարը:

Մարտադաշտում ցուցաբերած մարտական խիզախության համար Ալեքսան Սիմոնյանը պարգևատրվել է «Արիության համար», «Մարտական ծառայության» մեդալներով և «Հայոց բանակի զերազանցիկ» կրծքանշանով:




«Վան Արյան» հրատարակչությունը լույս է ընծայել Հայաստանի գրողների միության անդամ Սոնյա Խաչատրյան-Ստրալեցկիենի «Հեքիաթ Նարեկի և գրքերի թագավորի մասին» մանուկների հասցեագրված արձակ և չափածո գործերի ժողովածուն, որը հեղինակի 18-րդ գիրքն է: Երեխա-ծնող փոխհարաբերությունները, դրական ծնողավարման խնդիրներն ու համամարդկային ընդհանուր արժեքների պահպանումը գրողի ուշադրության առանցքում են:

Պատմվածքներն աչքի են ընկնում հեղինակին հատուկ անմիջականությամբ և ընթերցվում են ֆանտազիայի ժանրին բնորոշ հետաքրքրությամբ, իսկ բանաստեղծություններից յուրաքանչյուրը մեկ բանալի է, որը կարող է բացել մանուկ ընթերցողի սիրտը:



«Դպիր» հրատարակչությունը լույս է ընծայել Հայկ Դովհաննիսյանի «Անվաճարտ Պատերազմ» գիրքը, որտեղ ներկայացված է Երզնկայի, հետագայում Գյումրու գերդաստաններից մեկի պատմությունը՝ շարադրված տոհմի նահապետ, 1915թ. Մեծ եղեռնը վերապրած Դովհաննես Թռչունյան-Դովհաննիսյանի թողած հուշամատյանի, այնուհետև 1921-1994թթ. ժամանակահատվածում մեր հայրենիքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների հիման վրա: Հեղինակը՝ տոհմի նահապետի որդին, իր հոր ու գերդաստանի հարուստ և դրամատիկ կենսապատմությունը նկարագրել է հայ ժողովրդի պատմության էջերի և իրադարձությունների պատկերի ամբողջականության մեջ:

Գիրքը պատմաագագրական աշխատանք է, որ կհետաքրքրի ոչ միայն այս տոհմի զավակներին, այլև ընթերցողների լայն լսարանին:



Նվիրատուն և խորհրդատուն հայ ժողովրդական հեքիաթներում, / Մարինե Խեմչյան, - Ե.: ՀԱԻ հրատ., 2021. Մենագրության մեջ տիպահամեմատական քննության են առնված հայ ժողովրդական հեքիաթի հերոսի գործողություններին նպաստող միջավայրերը, խորհրդատուները, բնաշխարհը ներկայացնող ու գերբնական հատկություններով օժտված օգնականները, հրաշագործ առարկաները՝ իրենց առանձնահատկություններով, գործառույթներով, ծխակրոնական և առասպելաբանական ակունքներով: Ըստ հեքիաթների տիպերի միջազգային դասակարգման՝ ներկայացված են հեքիաթի հերոսի օգնականներին առնչվող մոտիվների զուգահեռները: Մենագրությունը նախատեսված է բանագետների, ազգագրագետների, բանահյուսություն ուսումնասիրողների և ժողովրդագիտական-հայագիտական հետաքրքրություն ունեցող ընթերցողների համար:

Կյանքից հեռացավ ՀԳՄ պատվավոր անդամ Ռաֆիկ Ավագյանը:
Հայաստանի գրողների միությունը, ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքն ու «Եղեգան փողի» խմբագրությունը ցավակցում և զորակցություն են հայտնում գրողի ընտանիքին ու մերձավորներին:
Հայոց լեզվի ու հայ բանաստեղծության հզոր ծառից Աշո բարբառը կրող և մեկ ճյուղ, ցավոք, պակասեց...

ԱՐՇՈՅԻ ԱՔԼՈՐԸ

Ամռանը շատ հաճելի է ալպյան արոտավայրերում լինելը: Շուրջ կանաչ է, փչում է գով քամին: Այնքան հանգիստ ես չնշում օրը:
Արշուն գյուղի երեսունական թվականների վարորդներից էր, աշխատել էր նաև մանկավարժ:
Վաթսուսն անց էր, բայց չէր հանգստանում, զբաղվում էր մեղվաբուծությամբ: Նա իր մեղվաբուծական խմբակները փոխադրել էր Զիարաթ սարի փեշի տակ՝ Կուզիքյան գյուղի մոտ:
Մենք էլ մեր մեղվաբուծական խմբակներն էինք փոխադրել Արշունի մոտ:
Արշուն Կուզիքյան գյուղում մեծ հարգանք ուներ, բոլորը ճանաչում էին նրան: Նա հատ-

կապես մոտ էր Զեյնալա խանուսի հետ, որ միշտ հյուրասիրում էր Արշունին:
Մի օր էլ Արշունի միջուկային կարմիր աքլորը:
Հավաքվել էին մեղվապահները, կանաչ դաշտի մեջ սեղան բացել: Սարերի լանջերին քեֆ անելը, սառնորակ աղբյուրներից ջուր խմելը մեծ հաճույք էին պատճառում բոլորին՝ թե՛ ծեր, թե՛ ջահել: Ամեն ինչ առատ էր: Ուտում էին, խմում, կատակում, կենացներ առաջարկում, երգում ֆիդայական երգեր և Արշունի հոգու հետ խաղում:
- Արշո՛, հիդա աքլորը մեղք է, մեճակ կփիթնա (կատակի): Տո՛ւր մորթինք, էփինք, ուտինք: Գինաս ի՞նչ համով միս ունի,- ասաց Արարատը:
- Չէ՛, չէ՛, ըդի էղնելու բան չէ: Օր աշխարհ ըսին՝ դու չհավատաս,- պատասխանեց Արշուն ու գնաց մեղվաբուծական խմբակները ստուգելու:
Արարատը բռնեց աքլորը, օդի լցրեց բերանը, այնքան որ աքլորը հարբեց ու անշարժ ընկավ Արշունի դաշտային տնակի մեջ:
-Հոխպե՛ր, հոխպե՛ր, արի՛, արի՛, քու աքլորը սատկել է,- բղավեցի ես:
Եկավ Արշուն: Բռնեց աքլորին, բարձրացրեց օդ, շարժեց ձախ ու աջ՝ աքլորը շարժվեց: Համոզվեց, որ սատկել է:
-Տղա՛, առեք մորթեք, միս չփչանա,- տխուր տոնով ասաց Արշուն:
Գործի անցան: Արարատը

մորթեց: Անուշն ու Մակուշը կրակը վառեցին: Տասը ռոպեում աքլորը եփավ:
- Արի՛, արի՛, Արշո, եփել է: Արի քու հալալ մալի պես կեր,- կանչում էր Արարատը:
Մի-մի բաժակ էլ օդի խմեցին ու անուշ արին կարմիր աքլորի միսը:
-Հոխպե՛ր Արշո, դու ինչո՞ւ հավատացիր սրանց, քո աքլորը չէր սատկել, օդի էին խմացրել, հարբած էր,- հուշեցի ես:
- Հա՛, իմացե՛ք, երբ գնացինք գեղ, ամեն մեկը մեկ հատ աքլոր կիտաք ընծի,- ասաց Արշուն ժպտալով:
Համածայնվեցինք:

ԺԱՄԱՅՈՒՅՑԻ ՍԼԱՔԸ

Սովորաբար մեղվապահները հուլիս ամսին մեղվաբուծական խմբակները տեղափոխում են հյուսիս, որտեղ բուսականությունը ավելի թարմ է:
Մեր գյուղացիներն էլ էին փոխադրում:
Հերթական փոխադրման ժամանակ Արշունի տվել էին երկու մեքենա՝ Ջազոյի Մերուժի ու իր տղայի՝ Սասունի մեքենաները:
Ես փոխադրում էի Արշունի հորեղբոր փեսայի՝ Վաղոյի մեքենայով:
Արշունի փեթակները հին էին, մեղուները փեթակների տարբեր անցքերից ազատ ելումուտ էին

անում անգամ ճանապարհին:
Արշուն իր շանը կապել էր Սասունի մեքենայի վրա, որտեղ քիչ էին բարձած մեղվաբուծական խմբակները: Հասանք Ղոնջալի գյուղի մոտերը: Եվ ի՞նչ՝ մեղուները կծել էին շանը: Շունը փորձել էր փախչել, բայց քանի որ շատ ծիգ կապած էր, չէր կարողացել կապը պոկել: Շնիկը կախվել էր ավտոմեքենայի թափքից ու ժամացույցի սլաքի նման գնում-գալիս էր ավտոյից կախված:
-Վաղո՛, կանգնի՛ր, ձայն տանք, փրկենք շանը, մեղք է,- դիմեցի իմ վարորդին:
-Չէ՛, չէ՛, թըղ մնա, մե սհատ էլ ռեկորդ ավելանա Օդնջորցոց վրա,- ծիծաղելով ասաց Վաղոն:
Ղոնջալի գյուղի կաթնաղբյուրի մոտ կանգնեցին մեքենաները, հայր ու որդի իջան: Արշուն խուճապահար մոտեցավ:
- Տղա՛, ո՞ւր մըր շուն:
- Չըր շուն դառել էր փահլևան, կախվել էր ավտոյից, ընկավ փիցավ,- ասաց Վաղոն:
- Վա՛յ, ես քու բարակեմ...,- հայիտելով Արշուն գնաց նստեց մեքենան:
ՄԻԱՄԻՏ ԱՆԱՀԻՏԸ
Մեծ աղջիկը՝ Վարդուշը, ջուր էր տաքացնում մորը՝ Անահիտին,

լողացնելու համար:
Այդ տարիներին գյուղում բաղնիք չկար: Լողանում էին փայտյա կամ թիթեղյա տաշտերում: Հեռուստացույցը նոր էր մուտք գործել գյուղ: Անահիտենք մի օր առաջ գնել էին հեռուստացույց: Աղջիկը՝ Վարդուշը, միացնում է հեռուստացույցը, գնում է մոր համար մեքենահագուստ բերելու:
Այրը տաշտի մեջ է:
Անահիտը հանկարծ նայում է հեռուստացույցին. մի խումբ տղամարդիկ գնում են-գալիս:
- Ո՛ւյ, սևով չեղա, հիդա տղամարդիկ հըմեն ընծի է կիշին, Դավն իմացավ, ընծի կվռնե տնից:
Ելնում է տաշտից, մտնում զգեստապահարանի մեջ, դուռը ծածկում: Գալիս է Վարդուշը: Մայրը չկա:
- Մա՛, մա՛, ուրի՛ս, Հիսուս Քրիստոս, ի՞նչ եղավ մերս,- անհանգստանում է աղջիկը:
- Վարդու՛շ, հոս իմ, հոս,- կանաց ասում է մայրը:
- Արի՛, այ՛ մեր, ջուրդ պաղավ:
- Չէ՛, չը՛մ իգա, ըդ տղամարդիկ հմեն ինծի է կիշին, ամոթ է, լա՛ո,- ասում է Անահիտը:
- Այ՛ մեր, ըդի տելվիզոր է, ըդոնք նկար ին, նկար:
- Իմալ թե՛՛ նկար, ըդոնք ընծի տեսա՛ն,- պնդում է Անահիտը:
- Չէ՛, այ՛ մեր, չէ՛:
Մի կերպ Վարդուշը համում է մորը զգեստապահարանից, լողացնում:

Ռաֆիկ ԱՎԱԳՅԱՆ

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ

Լրատվական գործունեությունն իրականացնող Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղ:
Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62
Վկայական N 01Բ 001543
տրված է 21.03.2005թ. հեռ. (094) 53 44 64
խմբագրական խորհուրդ
Գլխավոր խմբագիր՝ Ռոզա Դովհաննիսյան
Համակարգչային ձևավորումը՝ «Էլտրորադ Պրինտ» ՍՊԸ
Տպագրված է «Ռուբիկ Լարիբյան» Ա/Չ տպագրատանը
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 1 տպագրական մանուկ